

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒՆՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ
ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ**

28.02.2019

Նախքան օրակարգի հարցերին անցնելը ռեկտոր, պրոֆեսոր Վ.Բ. Առաքելյանը գիտխորհրդի կողմից շնորհավորեց և պարգևատրեց պրոֆեսոր Ս. Հովեյանի ղեկավարած գիտահետազոտական պրակտիկայում ընդգրկված ԱՖԿ մասնագիտացող ուսանողներին միջազգային պրակտիկայում բարձր մակարդակ ցուցաբերելու համար :

Ռեկտոր, պրոֆեսոր Վ.Բ. Առաքելյանը շնորհավորեց և պարգևատրեց ՀՀ կրթության և գիտության նախարարի կողմից հավաստագրով պարգևատրված «Լավագույն ուսանող» հանրապետական մրցույթի մշակույթ – սպորտ ոլորտում II տեղ զբաղեցրած ըմբիշ Ս. Գալստյանին և III տեղ զբաղեցրած ԱՖԿ մագիստրանտ Մ. Վ. Միքայելյանին:

Ռեկտոր, պրոֆեսոր Վ.Բ. Առաքելյանը գիտխորհրդի կողմից շնորհավորեց միջազգային 100 երկրների մասնակցությամբ ուսանողական գիտահետազոտական աշխատանքի մրցույթում I տեղ դիպլոմ ստացած ԱՖԿ մագիստրանտ Մ. Խալափյանին:

Ռեկտոր, պրոֆեսոր Վ.Բ. Առաքելյանը պրոֆեսոր Ս. Հովեյանին հանձնեց շնորհակալագիր միջազգային մրցույթում լավագույն ուսանողի աշխատանքը ղեկավարելու համար:

Ուսանողները հանդես եկան շնորհակալական խոսքով:

Ռեկտոր, պրոֆեսոր Վ.Բ. Առաքելյանը գիտխորհրդի կողմից շնորհավորեց պրոֆեսոր Հ. Մելքոնյանին 70-ամյա հոբելյանի կապակցությամբ:

Գիտխորհրդի անդամները թվով 29 աշխատակից հաստատեցին օրակարգի հարցերը:

Օրակարգ՝

1.2018-2019 ուսումնական տարվա ՖԴԱՏ և ՄՄԿ ֆակուլտետների առկա և հեռակա ուսուցման բաժնի ուսանողների և մագիստրանտների աշնանային քննաշրջանի արդյունքների ամփոփում:

(Ձեկուցող՝ ՄՄԿ Ֆակուլտետի ղեկան, պրոֆեսոր Գ.Սարգսյան, ՖԴԱՏ ֆակուլտետի ղեկան, դոցենտ Է.Գալտազազյան, հեռակա ուսուցման բաժնի պետ, պրոֆեսոր Կ.Բաբայան, մագիստրատուրայի բաժնի պետ, դոցենտ Ա.Ստեփանյան)

2.Ինստիտուտի ֆինանսական գործունեության մասին:

(Ձեկուցող՝ Հաշվապահական հաշվառման բաժնի պետ Ա.Գրիգորյան)

3.Գիտական խորհրդի 2018թ. մարտի 29-ի որոշման կատարումը ֆիզիոլոգիայի և սպորտային բժշկության ամբիոնի կողմից:

(Ձեկուցող՝ Հանձնաժողովի նախագահ , պրոֆեսոր Ե.Հակոբյան)

4.Հրատարակչական հանձնաժողովի առաջարկությունների մասին:

(Ձեկուցող՝ Հանձնաժողովի նախագահ, պրոֆեսոր Ա.Ա.Գրիգորյան)

5. ՀՀԿԳ Նախարարի ԲՈՒՀ Խորհրդի նախագահների հետ հանդիպման մասին:

6.Միջազգային և գիտատեղեկատվական կենտրոնի ղեկավարի զեկուցագրի քննարկում:

7.Գիտահետազոտական գործունեության մեթոդական ցուցումների հաստատում:

(Ձեկուցող՝ ուսումնագիտական աշխատանքների գծով պրոռեկտոր, պրոֆեսոր Ա.Ա.Գրիգորյան)

8.Սպարապետ Վ.Զ.Սարգսյանին պատվավոր պրոֆեսորի կոչում շնորհելու մասին:

1.ԼՍԵՑԻՆ՝ ՖԴՄՏ և ՄՄԿ ֆակուլտետների ղեկաններ պրոֆեսոր Գ.Սարգսյանի և ռոցենտ Է.Գալտագայանի ելույթները աշնանային քննաշրջանի արդյունքների վերաբերյալ:

(Ելույթները կցվում են)

Արտահայտվեցին՝ սպորտային մանկավարժության և հոգեբանության ամբիոնի վարիչ Հ.Բաբայանը, մարզախաղերի ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Հ.Մելքոնյանը, ուսումնադաստիարակչական աշխատանքների գծով պրոռեկտոր, պրոֆեսոր Ա.Ա.Գրիգորյանը, ռեկտոր, պրոֆեսոր Վ.Բ.Առաքելյանը: Նրանք նշեցին քննությունների անցկացման պատշաճ մակարդակը, ընդհանուր առաջադիմության ՄՈԳ 1,2 %-ով բարձրացումը, առանձին անդրադարձան ուսանողների հաճախումներին և գիտելիքների գնահատման չափանիշներին, շեշտվեց գնահատականների օբյեկտիվության անհրաժեշտությունը 2018-2019 ուստարում:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ 1. Հաստատել աշնանային քննաշրջանի արդյունքները:

2. Հաստատել գիտխորհրդի որոշումը:

2.ԼՍԵՑԻՆ՝ Հաշվառման բաժնի պետ, Ա.Գրիգորյանի տեղեկատվությունը ՀՖԿՄՊԻ ֆինանսական գործունեության վերաբերյալ:

(Զեկույցը կցվում է)

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Տեղեկատվությունը ընդունել ի գիտություն:

3.ԼՍԵՑԻՆ՝ Հանձնաժողովի նախագահ, պրոֆեսոր Ե.Հակոբյանի զեկույցը ֆիզիոլոգիայի և սպորտային բժշկության ամբիոնի կողմից կատարած աշխատանքների մասին գիտական խորհրդի (29.03.2018) որոշման վերաբերյալ:

(Զեկույցումը կցվում է)

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Հավանություն տալ ֆիզիոլոգիայի և սպորտային բժշկության ամբիոնի կողմից կատարած աշխատանքներին:

4.ԼՍԵՑԻՆ՝ Հանձնաժողովի նախագահ, պրոֆեսոր Ա.Ա.Գրիգորյանին: Նա ներկայացրեց հանձնաժողովի առաջարկությունները ուսումնական ձեռնարկները տպագրելու համար:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ 1.Համաձայնվել հրատարակչական հանձնաժողովի առաջարկությունների հետ:

2. Երաշխավորել տպագրության համար ասիստենտ Լ.Վերմիշյանի «Եվրոպական պարեր» ուսումնական ձեռնարկը:

3. Երաշխավորել տպագրության համար ասիստենտ Ա.Շախյանի «Սկզբնական ընտրության ժամանակակից մոտեցումները բոնցքամարտում » ուսումնական ձեռնարկը:

4. Երաշխավորել տպագրության համար ասիստենտ Գ.Մուրադյանի «ՀՀ հեռուստաընկերությունների ծրագրային քաղաքականության արդի խնդիրներն ու ժամանակակից միջոցները» ուսումնական ձեռնարկը:

5. Հանձնարարել հաշվապահությանը կատարել համապատասխան հաշվարկ:

5.ԼՍԵՑԻՆ՝ ՀՀԿԳ Նախարարի ԲՈՒՀ Խորհրդների նախագահների հետ հանդիպման մասին:

Ինստիտուտի ռեկտոր, պրոֆեսոր Վ.Բ.Առաքելյանը տեղեկացրեց ՀՖԿՍՊԻ խորհրդի նախագահ Ա.Ջուլֆալակյանի հետ հանդիպման մասին:

Գիտական քարտուղար, դոցենտ Մ.Ռ.Ասատրյանը ներկայացրեց հիմնական դրույթները, որոնցով այսուհետ պետք է առաջնորդվեն ԲՈՒՀ-երը:

1. Բուհերը պետք է զերծ լինեն քաղաքականությունից
2. Իսպառ վերացվի կոռուպցիան
3. Վերացվեն շահերի բախումները
4. Պետպատվերները իրականան ըստ աշխատաշուկայի
5. Կատարել ֆինանսների խնայողություն
6. Իրականացնել միջբուհական կապեր

Որոշ դրույթներ վերաբերվում էին ուսումնական գործընթացին, կարգապահությանը, պրոֆեսորադասախոսական կազմի ձևավորմանը:

Մասնավորապես նշվեց հետևյալը՝ ակտիվացնել կարիերայի կենտրոնի բազան, կապը շրջանավարտների հետ, ինստիտուտում կազմակերպել դպրոցի ուսուցիչների վերապատրաստում, տեղեկացնել ուսանողներին էլեկտրոնային գրադարանի մասին, ստեղծել ինստիտուտում ուսանողների հետ տարվող աշխատանքների բաժին, խիստ հետևել ուսանողների հաճախումներին, փոխել աշխատավարձերի չափերի սահմանումը հաշվի առնելով դասախոսի լեզուների իմացությունը, գիտական

հողվածների քանակը և այլն, ձեռնարկել միջոցառումներ ինստիտուտի միջազգայնացման ուղղությամբ:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Տեղեկատվությունը ընդունել ի գիտություն:

6.ԼՍԵՑԻՆ՝ Միջազգային և գիտատեղեկատվական կենտրոնի ղեկավար Ա.Նուշիկյանին: Նա ներկայացրեց իր զեկուցագիրը թարգմանչի հաստիք տրամադրելու խնդրանքով:

(Զեկուցագիրը կցվում է)

ՈՐՈՇԵՑԻՆ՝ 1.Հաշվի առնելով թարգմանչական աշխատանքների բեռնվածության ավելացումը հատկացնել միջազգային և գիտատեղեկատվական կենտրոնին մեկ թարգմանչի հաստիք:

2.Հանձնարարել մարդկային ռեսուրսների կառավարման բաժնին հաստիքացուցակում կատարել համապատասխան փոփոխություն:

7.ԼՍԵՑԻՆ՝ ուսումնագիտական աշխատանքների գծով պրոռեկտոր, պրոֆեսոր Ա.Ա.Գրիգորյանին: Նա ներկայացրեց գիտահետազոտական գործունեության մեթոդական ցուցումները:

(Ցուցումները կցվում է)

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Հաստատել ՀՖԿՍՊԻ գիտահետազոտական գործունեության մեթոդական ցուցումները:

8.ԼՍԵՑԻՆ՝ Ռեկտոր, պրոֆեսոր Վ.Բ.Առաքելյանին: Նա առաջարկեց, հաշվի առնելով Վ.Սարգսյանի 60 ամյա հոբելյանի կազմակերպվող միջոցառումը և նրա գործունեությունը սպորտի ոլորտում, հետմահու շնորհել նրան պատվավոր պրոֆեսորի կոչում:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Հայոց սպարապետ Վազգեն Զավենի Սարգսյանին հետմահու շնորհել ՀՖԿՍՊԻ պատվավոր պրոֆեսոր կոչում:

ՌԵԿՏՈՐ, ՊՐՈՖԵՍՈՐ՝

Վ. Բ. ԱՐԱՔԵԼՅԱՆ

ԳԻՏԱԿԱՆ ՔԱՐՏՈՒՂԱՐ, ԴՈՑԵՆՏ՝

Մ. Ռ. ԱՍԱՏՐՅԱՆ

